

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

< ՐԱՄԱՆ

Na 01/08.3)12764-18

«01» OJ 2019p

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.04.4
«ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
0732.04.07.4 «ԿԱՐԿԱՍԱՅԻՆ-ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ /ԿԵԿ/ ՄՈՆՏԱԺՈՂ»
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔՈԼԵՋ» ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. մարտի 22-ի թիվ 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանի 4-րդ և 9-րդ կետերը, «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկի կողմից ներկայացված դրական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև «Կնաուֆ Արմենիա» ՍՊԸ-ի գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության

0732.04.07.4 «Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /ԿԵԿ/ մոնտաժող որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի։

- 2. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան ռեկտորին՝
 - 1) 2019-2020 ուսումնական տարվանից փորձարկման կարգով ներդնել 0732.04. «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության 0732.04.07.4 «Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /ԿԵԿ/ մոնտաժող։ որակավորման պետական կրթական չափորոշիչը «Ճարտարապետության Լ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջին մասնագիտական կրթության քոլեջ» դեպարտամենտում,
 - 2) չափորոշչի փորձարկման ընթացքի վերաբերյալ վեցամսյա պարբերականությամբ գրավոր հաշվետվություն ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի է սպորտի նախարարություն, իսկ փորձարկումն ավարտվելուց հետո՝ ամփոփ հաշվետվություն՝ անհրաժեշտ գնահատումներով և առաջարկություններով։
- 3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Գրիշա Թամրազյանին։

นานอหน <นากหออกหนอนน

Recoverable Signature

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված 1	
ՀՀ կրթության և գիտու	թյան
նախարարի «»	_2019թ.
N հրամանի	

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.04.4 <<ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0732.04.07.4 << ԿԱՐԿԱՍԱՅԻՆ-ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ /ԿԵԿ/ ՄՈՆՏԱԺՈՂ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1. Սույն չափորոշիչը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4
 ««Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության՝ ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի ««Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 714-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակի 4-րդ մակարդակի 0732.04.07.4 ««Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող»» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները։
 - 2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<<արդարման շինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝
 - 1) առկա,
 - 2) դրսեկության (էքստեռնատ)։
 - 3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<<արդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
 - 1) կրթության առկա ձևով՝
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 1 տարի

- բ. իիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում՝ 3 տարի
- 2) դրսեկության (էքստեռնատ) ձևով կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման։
- 4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 ««Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության 0732.04.07.4 ««Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով և հիմնական կրթության հիմքով՝ առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրն ուսումնառող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 1368 ժամ է, առավելագույն ծավալը՝ 2214 ժամ։ Հիմնական կրթական ծրագիրը հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 104 շաբաթով։

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.04.4 «ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0732.04.07.4 « ԿԱՐԿԱՍԱՅԻՆ-ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ /ԿԵԿ/ ՄՈՆՏԱԺՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- 5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 ««Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում»» մասնագիտության 0732.04.07.4 ««Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող»» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների։
- 6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները.
- 1) կարկասային երեսպատման հենքային կոնստրուկցիաներ կառուցող, երեսպատող, նորոգող,
- 2) բարդ երկրաչափական ձևերի կարկասային երեսպատման կոնստրուկցիաների մոնտաժող, երեսպատող։
- 7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-

երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորմամբ մասնագետի մասնագիտական գործունեության պարտականություններն են.

- 1) կարկասային երեսապատման կոնստրուկցիաների մոնտաժման աշխատանքների համար աշխատատեղերի, սարքավորումների և գործիքների նախապատրաստում,
- 2) կարկասային երեսապատման կոնստրուկցիաների մոնտաժման աշխատանքներում օգտագործվող նյութերի նախապատրաստում,
- 3) կարկասալին երեսպատման կոնստրուկցիաների հիմնակմախքների կառուցում,
- 4) կարկասային երեսպատման աշխատանքների կատարում,
- 5) աշխատանքների բոլոր փուլերում անվտանգության կանոնների, աշխատանքների հրահանգների և կանոնակարգերի պահանջների պահպանում,
- 6) կարկասային երեսպատված կոնստրուկցիաների նորոգման անհրաժեշտության գնահատում, աշխատանքների որոշակիացում, նորոգում,
- 7) պատերի ոչ կարկասալին երեսպատման աշխատանքների կատարում,
- 8) աշխատանքների որոշակի փուլերի համար անհրաժեշտ նյութերի քանակի հաշվարկ։

ԳԼՈՒԽ 3

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.04.4
<<ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
0732.04.07.4 << ԿԱՐԿԱՍԱՅԻՆ-ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ /ԿԵԿ/ ՄՈՆՏԱԺՈՂ>>
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- 8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում է շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն։
- 9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<<արդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագիրն ավարտած շրջանավարտը պետք է.
- 1) ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորման պահանջներին համապատասխան ունենա ազգային և համաշխարհային մշակույթի ու պատմության վերաբերյալ գիտելիքներ,
- 2) ունենա մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, կարողանա դրանք կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում,
- 3) մասնագիտական գործիքները, սարքավորումները, հարմարանքները և նյութերը արդյունավետ և նպատակային օգտագործելու նպատակով կիրառի մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքները,
- 4) ունենա մասնագիտական գործողությունները գործող նորմաների սահմաններում իրականացնելու հմտություններ,
- 5) ճիշտ ընկալի և կիրառի մասնագիտական տերմինաբանությունը,

- 6) ունենա մասնագիտական գործունեության ժամանակ համապատասխան գործողությունների սոցիալական հետևանքները հաշվի առնելու հմտություն,
- 7) ունենա մասնագիտական ինքնազարգացման և կատարելագործման նպատակով անհրաժեշտ տեղեկությունները ընտրելու և մասնագիտական աղբյուրներից ձեռք բերելու հմտություն,
- 8) ցուցաբերի աշխատանքային խնդիրների լուծման ընթացքում պատասխանատվություն ստանձնելու, հիմնավորված լուծումներ գտնելու կարողություն,
- 9) ունենա ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում աշխատելու հմտություն։

ዓLበՒԽ 4

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.04.4
<<ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
0732.04.07.4 << ԿԱՐԿԱՍԱՅԻՆ-ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ /ԿԵԿ/ ՄՈՆՏԱԺՈՂ>>
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ
ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<<արդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն։
- 11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<<արդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝
- 1) ցուցաբերի ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթների իմացություն,
 - 2) տիրապետի հայոց լեզվին,
 - 3) հաղորդակցվի առնվացն մեկ օտար լեցվով,
- 4) ցուցաբերի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին տիրապետելու կարողություն,
 - 5) ցուցաբերի ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի՝ որոշակի իմացություն,
- 6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

- 7) տիրապետի էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությանը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթներին,
- 8) ցուցաբերի մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ իմացություններ,
- 9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ։
- 12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 ««Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության 0732.04.07.4 ««Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով ներկայացված առանցքային հմտություններին։
- 13. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ներկայացված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին։

ԳԼՈՒԽ 5

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.04.4
<<ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
0732.04.07.4 << ԿԱՐԿԱՍԱՅԻՆ-ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ /ԿԵԿ/ ՄՈՆՏԱԺՈՂ>>
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- 14. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) ՈՒսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում։ Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է։
- 2) ՈՒսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն։

- 3) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը։
- 15. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման ուսումնամեթոդական ապահովման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականազմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ։
- 16. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<<արդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի։ Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան։
 - 1) ՈՒսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝
 - ա. մասնագիտական տեխնոլոգիայի և շինարարական նյութերի,
 - բ. հատուկ մասնագիտական,
 - գ. անհատական համակարգիչների,
 - դ. հալոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,
 - ե. օտար լեզվի,
 - զ. աշխատանքի անվտանգության,
 - է. մեքենա-սարքավորումների և գործիքների։
 - 2) ՈՒսումնական լաբորատորիաների երաշխավորվող զանկը՝
 - ա. շինարարական նյութերի։
 - 3) ՈՒսումնական արհեստանոցներ՝
 - ա. չոր շինարարական աշխատանքների,
 - 4) Սպորտային համալիր՝
 - ա. մարզադահլիճ,
 - բ. մարզահրապարակ։

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ։

17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ դրսեկության (էքստեռնատ) ձևով ուսուցման դեպքում սահմանվում է ուսումնական պլանով,
 - 2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,
- 3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,
- 4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,
 - 5) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,
- 6) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը։
- 18. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<<արդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,
- 2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պյանով,
- 3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները.
- 4) ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում.
- 5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում։
- 19. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 ««Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության 0732.04.07.4 ««Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող» որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) ուսումնառության ընթացքում ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,
- 2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

- 3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,
- 4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի ձեռք բերած կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 0732.04.4 ««Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության 0732.04.07.4 «Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող» որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին։

ԳԼՈՒԽ 6

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.04.4 <<ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0732.04.07.4 << ԿԱՐԿԱՍԱՅԻՆ-ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ /ԿԵԿ/ ՄՈՆՏԱԺՈՂ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐՋԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

- 20. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման 2ինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասայիներեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղլուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը։
- 21. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 ««Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտության 0732.04.07.4 ««Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական դրագմելու ժամանակ՝
- 1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,
- 2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,
- 5) պետք է որակավորման նկարագրին համապատասխան դրա ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

- 6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,
- 7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

		ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»
1.	Մոդուլի դասիչը	U<-<-4-19-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել
		միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և
		մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու
		հարաբերությունների ստեղծման կարողությունը։
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն։
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված
		կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է։
6.	ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական
		նպատակների իրականացման համար
7.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար
		հաջողությունների համար,
		2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,
		3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,
		4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,
		5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ։
8.	ՈՒսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
9.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,

2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,
3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,
4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ,
իաճոյախոսում է,
5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության
շարունակականությունը։
Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,
2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,
3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային
տեղեկատվությունը փոխանցելու համար,
4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,
5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,
6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,
7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի։
Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ
hաստեատիրո <u>ջ</u> ,
2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,
3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,
4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և
շահադրդելու համար,
5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է

21.	ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության
		կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է։
20.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված
19.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն։
18.	Մոդուլի տևողությունը	36 dwú
		իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ։
		կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ
		իամապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, իավանական վտանգները և վթարները
		կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին
17.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և
16.	Մոդուլի դասիչը	U<-UU0-4-19-001
	 	ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
		6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ։
		շաուադությու ուսնար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,
		4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,
		3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,
		2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,
	imaimpama ZmyrmaliZauli	ցուցահանդեսներ և այլն),
15.	Կատարման չափանիշներ	գործընկերության համար 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ,
14.	ՈՒսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունական
		7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները։
		6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,

		կանոնները
22.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,
		2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,
		3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,
		4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,
		5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,
		6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները,
		պատասխանատվությունները։
23.	ՈՒսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
24.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա
		ազդող գործոնները (սանիտարահիգենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական,
		ungիալական–hnգեբանական),
		2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման,
		ճառայգայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն)
		3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,
		4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները,
25.	ՈՒսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
26.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և
		hետևանքները,
		2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,

		3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ
		և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված
		միջոցառումները,
		4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների
		փաստաթղթային ձևակերպումների կարգը։
27.	ՈՒսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
28.	Կատարման չափանիշներ	1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,
		2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,
		3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,
		4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,
		5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն
		ցուցաբերելու գործողություններ,
		6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,
		7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման
		գործողությունները։
	ՄՈԴՈ	ՆԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»
29.	Մոդուլի դասիչը	U<-<0-4-19-001
30.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա
		ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային
		գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային
		օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը,
		կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ
		նպատակային աշխատելու հմտությունները
31.	Մոդուլի տևողությունը	36 ժամ

32.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն։
33.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված
		կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է։
34.	ՈՒսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
35.	Կատարման չափանիշներ	1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,
		2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,
		3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scaner, projector,
		fax, պատճենման սարք և այլն),
		4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,
		5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),
		6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,
		7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,
		8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված
		վայրում,
		9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print)։
36.	ՈՒսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
37.	Կատարման չափանիշներ	1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
		2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,
		3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ,
		լրացումներ,
		4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի
		դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության
		խորությունները լուսանցքներից,
		5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և

		այլն։
38.	ՈՒսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
39.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել
		դրանք,
		2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,
		3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն),
		4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,
		5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ։
40.	ՈՒսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
41.	Կատարման չափանիշներ	1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,
		2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
		3) գծագրում է կանոնավոր պատկերներ,
		4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը
		փոխելով,
		5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,
		6) գծագրում է տեքստային բլոկներ,
		7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում։
42.	ՈՒսումնառության արդյունք 5	Յուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
43.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,
		2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,
		3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,
		4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության
		hամար,
		5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը։

44.	ՈՒսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
45.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է « համացանց » հասկացությունը,
		2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,
		3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամաների, Back և Forward կոճակների
		նշանակությունը,
		4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և
		բաց ցանցերից),
		5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,
		6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,
		7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի
		(իաղորդագրություն, նամակ և կցորդ)։
		ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ>>
46.	Մոդուլի դասիչը	U<-2-4-19-001
47.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար
		անհրաժեշտ գործնական հմտություններ։ Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և
		վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է
		առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը
		կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները
48.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
49.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ։
50.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված
		կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է։
51.	ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
52.	Կատարման չափանիշներ	1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում,

		2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում,
		3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը
		իիմնավորում է,
		4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է,
		5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում,
		6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում,
		7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները,
		8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է։
53.	ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
54.	Կատարման չափանիշներ	1) կազմակերպության կազմակերպչա-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է,
		2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ
		ξ ,
		3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում,
		4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,
		5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,
		6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,
		7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,
		8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,
		9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,
		10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,
		11) կազմակերպության կառավարմանն առընչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և
		hիմնավոր է,
		12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,
		13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է։

55.	ՈՒսումնառության արդյունք 3	Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ
56.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում <<շուկա>> հասկացությունը,
		2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է,
		3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է,
		4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում,
		5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է,
		6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է,
		7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է,
		8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է,
		9) շուկայի հատվածավորումը իրատեսական է,
		10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում,
		11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է։
57.	ՈՒսումնառության արդյունք 4	Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը
58.	Կատարման չափանիշներ	1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում,
		2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման
		անհրաժեշտությունը հիմնավորում է,
		3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է,
		4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը
		ճիշտ է,
		5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության
		ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում,
		6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է,
		7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է
		մեկնաբանում,

		8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է,
		9) իիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների
		հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,
		10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և
		արդյունքների գնահատումը ճիշտ է,
		11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և
		արդյունքների գնահատումը ճիշտ է,
		12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ
		արդյունքների եզրահանգումները հիմնավոր է։
59.	ՈՒսումնառության արդյունք 5	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
60.	Կատարման չափանիշներ	1) <<ծախս>> հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում,
		2) տարբերակում է ծախսերի խմբերը,
		3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում,
		4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է,
		5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող
		ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում,
		6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է
		ներկայացնում,
		7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է
		կիրառում,
		8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը,
		9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում,
		10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է,
		11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է։

61.	ՈՒսումնառության արդյունք 6	Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր
62.	Կատարման չափանիշներ	1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է,
		2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է,
		3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման
		աղբյուրները ճիշտ է ներկայացնում,
		4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն,
		5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում,
		6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է,
		7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր
		ξ ,
		8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել,
		9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման
		քայլերը հիմնավոր են։
63.	ՈՒսումնառության արդյունք 7	Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ
64.	Կատարման չափանիշներ	1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում,
		2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում,
		3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների
		հաշվարկը ճիշտ է կատարում,
		4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում,
		5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության
		պահանջներին,
		6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում,
		7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում,
		8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում,

	9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշ	ızın ţ
	ներկայացնում։	

Աղյուսակ 2

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.04.4 <<Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության 0732.04.07.4 <<Կարկասային-երեսպատման կոնստրուկցիաների /կեկ/ մոնտաժող>> որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

	ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ>>		
1.	Մոդուլի դասիչը	ԿธԿՄ-4-19-001	
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գծագրեր կատարելու ընթացքում	
		գծագրության տարրերը կիրառելու, գծագրերից օգտվելու կարողություններ։	
3.	Մոդուլի տևողությունը	48 ժամ	
